I

# ԲԼԲՈՒԼ

Բաղի բլբուլ, բաղի բլբուլ,
Ինձ պէս խոցուած, սիրահար,
Բաղի միջին, բաղի միջին
Երգ ես կանչում անդադար։

Երգէ՛, բլբուլ, վէրքի բլբուլ,
Վարդդ գուցէ քեզ խղճայ.
Երգէ վէրքով, ծով արցունքով,
Վարդիդ սիրտը թող զղջայ…

II

***

Թող ձօնեմ իմ սրտի ծաղկունքից նորաբոյս
Իմ ձեռքով պատրաստած մի փնջիկ-վարդ շուշան,
Թող ձօնեմ սեղանիդ—պաշտելի՛ մատաղ կոյս,
Սրբութեան վեհ տիպար, դիցուհի երկնարժան։

Թող այնտեղ, սրբազան տաճարում քո խորունկ
Այդ փնջիկ յաւիտեան չթօշնի, թառամի.
Աւելի բուրաւէտ, քան հալուէ եւ կնդրուկ
Կը խնկէ քեզ, ո՛վ կոյս, պաշտաման արժանի։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ